
ԱՂՕԹՈՒՄ ԵՄ

Posted on May 8, 2018 by Keghart



Category: Opinions

Երբ ժողովուրդն երամ երամ հաւաքւում է ու
բողոքում,
տանս նստած, սրտիս խորքից աղօթում
եմ:

Երբ երկիրս են անխղճաբար բորենիները
թալանում,
ես դեռ չոքած անկողնուս մօտ աղօթում
եմ:

Երբ ժողովուրդն երամ երամ հաւաքւում է ու
բողոքում,
տանս նստած, սրտիս խորքից աղօթում
եմ:

Երբ երկիրս են անխղճաբար բորենիները
թալանում,
ես դեռ չոքած անկողնուս մօտ աղօթում
եմ:

Երբ որ ագահ, անգութ մարդիկ կուտակում են հարստութիւն,
եկեղեցու խորհրդաւոր սրահի մէջ
աղօթում եմ:
Երբ աղքատը խեղճ ու կրակ, ձեռք է մեկնում
ունեւորին,
ինչպէս եւ միշտ, խոր հաւատքով
աղօթում եմ:
Երբ լաւ մարդիկ քայլ են առնում որ երկիրը
բարգաւաճի,
ես էլ նրանց յաջողութեան, պարզ ու անկեղծ
աղօթում եմ:
Երբ տեսնում եմ ցաւօք սրտով քայքայւում է մի ընտանիք,
ես տրտմորեն, խորը վշտով
աղօթում եմ:
Տեսնում եմ որ արդարութեան խախտումները շատանում են,
սակայն ես դեռ մաքուր սրտով աղերսանքով
աղօթում եմ:
Իմ դրացին պաշտպանում է հայրենիքս թշնամու
դէմ,

ես էլ նստած աներեւոյթ թշնամու դէմ աղօթում
եմ:
Խիղճս հանգիստ աղօթում եմ եւ վստահ եմ սրտիս խորքից,
ՏԷՐ ԱՍՏՎԱԾՆ էլ հաւատացեալ անձի համար աղօթում է:
Վ. Ծ.
Թորոնթո,
30 Ապրիլ
2018